ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, ԵՐԵՎԱՆ, ՍԱՐՅԱՆ 22, ՀԵՌ.(374-10) 528521, ՖԱՔՍ (374-10) 525563

« 29 » սեպտեմբերի 2014թ.
№ ՃՂՍ-2229ԳԴ

***ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3 ծածկագրով ընթացակարգի շրջանակում գրանցված մասնակիցներին***

Հարգելի մասնակից,

«ԳԱԿ-ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի շրջանակում ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի /այսուհետ՝ հանձնաժողով/ կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի և Ձեր միջև կնքված շրջանակային համաձայնագրով նախատեսված ծառայություն(ներ):

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիրն է հանդիսանում ՀԾԿՀ-14/1-ՇՀԱՇՁԲ-11/3:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտ անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ, քան 2014 թվականի հոկտեմբերի 9-ը, ժամը $10^{00}$-ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Երջանիկ Գևորգյանը:

Հայտերը կբացվեն 2014 թվականի հոկտեմբերի 9-ին, ժամը $10^{00}$-ին:

Գնման առարկա է հանդիսանում հանձնաժողովի կարիքների համար տպագրության աշխատանքների ծառայությունների ձեռք բերումը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կարիքների համար տպագրության աշխատանքների ծառայությունների (որոնք կազմված են 5 չափաբաժիններից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարակայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 6 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. Գնային առաջարկ (Հավելված N 5.1): Մասնակցի գնային առաջարկը ներկայացվում է ինքնարժեք և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով:

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ԳԱԿ- ՇՀԱՇՁԲ-11/3» ծածկագրով ընթացակարգի իրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը և մասնակցի կողմից ներկայացվելիք հայտի օրինակելի ձևը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ psrc@psrc.am:

*Մ.Սողոմոնյան*